# «ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 631-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

______________ 2017 թվականի N ____ -Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 631-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 631-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» ենթակետով.
«ե) ծիրանենու և խաղողի կոլեկցիոն ու ցուցադրական այգիների պահպանությունը։»։

Որոշման 5-րդ կետի «գ» ենթակետում «մթերքների» բառից հետո լրացնել «, պտղատու և խաղողի պատվաստված տնկանյութի» բառերը։
Որոշման 8-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«ա) Արմավիրի մարզի Վաղարշապատի քաղաքային համայնքի վարչական տարածքից՝ 106.0 հեկտար գյուղատնտեսական նշանակության հող, որից՝ 96.5 հեկտար վարելահող և 9.5 հեկտար բազմամյա տնկարկներ՝ 5 հեկտար ծիրանենու ու 4.5 հեկտար խաղողի կոլեկցիոն ու ցուցադրական այգիներ.»։

Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1 կետով.
«8.1 Սահմանել որ՝ սույն որոշման 8-րդ կետի «ա» ենթակետով «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացված 5 հեկտար ծիրանենու և 4.5 հեկտար խաղողի կոլեկցիոն ու ցուցադրական այգիները ենթակա չեն օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու։»։

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը